**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01>> սեպտեմբերի 2025թ.                                        N ՄՈ/819 -Ա

ք. Արմավիր

## «ԱՐՄԱՎԻՐԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԵՐԱՍԻՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գերասիմ Մարտիրոսյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գերասիմ Մարտիրոսյանին տրամադրել ամենամյա հերթական արձակուրդի մասը՝ 2025 թվականի սեպտեմբերի 3-ից 16-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գերասիմ Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գասպարյանին:
3. Գերասիմ Մարտիրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի սեպտեմբերի 17-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Восстановимая подпись

X

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 Բ□ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ